ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ

2015

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ 2

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ 2

Արտահանման վրա հիմնված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ նախատեսված ծրագրերի իրականացում 2

«Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի խթանման ծառայություններ» 2015 թվականի ծրագրի իրականացում 3

«Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի և առնչվող ՀՀ օրենքների նախագծերի փաթեթի մշակում և ներկայացում 5

«Զբոսաշրջությանն աջակցության ծառայություններ» 2015 թվականի ծրագրի իրականացում 5

Քաղաքացիական ավիացիայի բնագավառում միջազգային իրավապայմանագրային հարաբերությունների վերանայում 9

Արտահանման շուկաներ մուտքի հնարավորությունների ընդլայնում 11

Որակի ենթակառուցվածքների բարելավում 12

ԳՈՐԾԱՐԱՐ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ ԵՎ ՓՄՁ-ԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԴԼԱՅՆՈՒՄ 13

Հայաստանի գործարար միջավայրի բարելավման միջոցառումների 2015 թվականի ծրագրի իրագործում 13

Տեսչական բարեփոխումների իրականացում՝ տեսչական համակարգի օպտիմալացման հայեցակարգին և գործողությունների ծրագրին համահունչ 14

ՓՄՁ-ին պետական աջակցության 2015 թվականի ծրագրի իրականացում 15

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԻՆՈՎԱՑԻՈՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԻ ԱՄՐԱՊՆԴՈՒՄ 16

Տնտեսության ինովացիոն զարգացման հայեցակարգային հիմնադրույթների ամրագրում 16

Ինովացիոն ոլորտում միջազգային համագործակցության ակտիվացմանն աջակցություն 16

Գյումրու և Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնների գործունեության իրականացման 2015 թվականի ծրագրի իրականացում 18

ՆԱԽԱԲԱՆ

ՀՀ կառավարության 2015թ. հունվարի 15-ի թիվ 111-Ն որոշմամբ՝ հաշվետու տարվա համար ՀՀ էկոնոմիկայի նախարարության գործունեության առաջնահերթությունների օրակարգը ներառել է ինը միջոցառում և երեք գերակա խնդիր, որոնց իրագործման ուղղությամբ կատարված աշխատանքների արդյունքների հաշվետվությունը ներկայացվում է ստորև:

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Արտահանման վրա հիմնված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ նախատեսված ծրագրերի իրականացում

Իրականացվել են ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարության շրջանակներում հաստատված 8 ոլորտային ռազմավարությունների (կոնյակագործություն, գինեգործություն, ճշգրիտ ճարտարագիտություն, դեղագործություն ու բիոտեխնոլոգիաներ, ոսկեգործություն, ադամանդագործություն, ժամագործություն և թեթև արդյունաբերություն) գործողությունների ծրագրով նախատեսված աշխատանքները:

Աշխատանքներ են իրականացվում ՀՀ կառավարության 14.11.2013թ. N1262-Ն որոշմամբ սահմանված կարգով արդյունաբերական նպատակներով օգտագործված քսայուղերի ակցիզային հարկի վերադարձման ուղղությամբ: 2015 թվականի ընթացքում բավարարվել են 3 ընկերության 9 հայտեր, արդյունքում վերադարձված ակցիզային հարկի գումարները կազմել են 59.8 մլն ՀՀ դրամ:

«Ժամանակավոր արտահանում» ռեժիմի շրջանակում հավանության է արժանացել 1 ընկերության ծրագիր, հետաձգվել են 51.4 մլն ՀՀ դրամ մաքսային արժեքով ապրանքների մաքսային վճարներ:

Պետական աջակցության ծրագրի շրջանակներում 2015թ. ընթացքում իրականացվել են մի շարք աշխատանքներ, մասնավորապես՝

- Իրականացվել է արտահանման ուղղվածություն ունեցող մշակող արդյունաբերության ոլորտի կազմակերպություններին (կապիտալ ներդրումների իրականացում և շրջանառու միջոցների ձեռքբերում)՝ «ՓՄՁ ներդրումներ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի կողմից տրամադրվող վարկերի տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորում: Հաշվետու ժամանակահատվածում բավարարվել է մշակող արդյունաբերության ոլորտների թվով 16 ընկերության հայտ:
- Իրականացվել է մշակող արդյունաբերության ոլորտում արտադրվող ապրանքների համար տվյալ տարում ստացած սերտիֆիկատների, ՀՀ-ում կենսահամարժեքության փորձաքննության, ՀՀ-ում որակի կառավարման համակարգերի ներդրման համար ծախսերի համաֆինանսավորում մինչև 50%-ի չափով: Հաշվետու ժամանակահատվածում բավարարվել է 8 կազմակերպության 12 հայտ:
- 2015 թվականի ապրիլի 26-ից 28-ը կազմակերպվել է «Արտադրված է Հայաստանում Էքսպո 2015» ցուցահանդեսը, որին մասնակցել են ավելի քան 300 արդյունաբերական ընկերություններ և մի շարք ՏՏ ոլորտի ընկերություններ:
- 2015 թվականի հոկտեմբերի 24-ից 26-ը կայացել է «Yerevan Show» 5-րդ միջազգային ոսկերչական ցուցահանդեսը:
- Իրականացվել են հանրաճանաչ միջազգային արդյունաբերական ոլորտի կազմակերպությունների ներգրավման և մուտքի ապահովման միջոցառումներ:

- 2015թ. հոկտեմբերի 15-ին Իրանի առաջին փոխնախագահի այցի շրջանակներում Երևանում կազմակերպել է Հայաստան-Իրան գործարար համաժողով, որին մասնակցում են 300-ից ավելի գործարար Հայաստանից և Իրանից:
- 2015թ. նոյեմբերի 9-ին ՀՀ էկոնոմիկայի նախարարի այցի շրջանակներում Թեհրանում կազմակերպվել է Հայաստան-Իրան գործարար համաժողով, որին մասնակցում էին ավելի քան 280 իրանական և հայ գործարարներ: Գործարար համաժողովի շրջանակներում տեղի ունեցան 200-ից ավելի երկկողմ հանդիպումներ՝ ՏՏ, ճշգրիտ ճարտարագիտության, ոսկերչության, սննդի վերամշակման, գյուղատնտեսության, շինարարության և շինանյութի, տրանսպորտային և լոգիստիկ ծառայությունների, բանկային և խորհրդատվական, հանքաարդյունաբերության և այլ ոլորտները ներկայացնող հայ և իրանցի գործարարների միջև:

200 մլն դրամը գերազանցող ներդրումային ծրագրերի շրջանակներում ներմուծված սարքավորումների ԱԱՀ-ի վճարման ժամկետի հետաձգման նպատակով 2015 թվականի վերջի դրությամբ ՀՀ կառավարության կողմից հավանության է արժանացել 9 ներդրումային ծրագիր, որոնց արդյունքում սարքավորումների ձեռք բերման համար իրականացվելու է 9.94 մլրդ ՀՀ դրամի ներդրում:

Արդյունաբերական ընկերությունների գործունեությունը պարզեցնելու նպատակով մշակվել են ՀՀ կառավարության որոշման 20 նախագծեր (13-ն արժանացել են հավանության, 7-ը՝ գտնվում են քննարկման փուլում) և ՀՀ օրենքի 11 նախագիծեր (8-ն ընդունվել է, 3-ը՝ գտնվում են քննարկման փուլում):

Աշխատանքներ են իրականացվել ԵԱՏՄ անդամ պետությունների միջև արդյունաբերական կոոպերացիայի զարգացման և խորացման ուղղությամբ, մասնավորապես՝ Եվրասիական Տնտեսական Հանձնաժողովին առաջարկություններ են ներկայացվել սև մետալուրգիայի, հաստոցաշինության, ինչպես նաև տեխնոլոգիական պլատֆորմների համագործակցության ուղղությամբ:

«Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի խթանման ծառայություններ» 2015 թվականի ծրագրի իրականացում

ՀՀ կառավարության 2015թ. հունվարի 15-ի նիստում ընդունվել է «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի խթանման ծառայությունների 2015 թվականի ծրագիրը և ծրագրի կատարումն ապահովող միջոցառումների իրականացման ժամանակացույցը հաստատելու մասին» N27-Ն որոշումը:

2014թ. ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» ՀՀ օրենքի դրույթների կիրարկումն ապահովելու նպատակով նախարարության կողմից մշակվել և ՀՀ կառավարության 2015թ. մարտի 19-ի նիստում ընդունվել է N312-Ն որոշումը, որի ուժի մեջ մտնելուց հետո՝ 2015թ. ապրիլի 9-ից ի վեր ստեղծվել են ոլորտի 71 սկսնակ ընկերություններ և 304 նոր աշխատատեղեր: Նշված ընկերությունները դիմել են հավաստագրման համար, որոնցից հավաստագրեր են ստացել 61 ընկերություն:

2016թ.-ից ՏՏ ոլորտի վարչական վիճակագրական ռեգիստրի արդյունավետ վարումն ապահովելու նպատակով մշակվել և ընդունվել են անհրաժեշտ ենթաօրենսդրական ակտեր՝ ՀՀ ֆինանսների և ՀՀ արդարադատության նախարարությունների կողմից ՀՀ էկոնոմիկայի նախարարությանը տեղեկատվության տրամադրման կարգը և օրինակելի ձևերը, տնտեսվարող սուբյեկտների կողմից նախարարություն ներկայացվելիք հաշվետվության ձևը և լրացման մեթոդական ցուցումները, նախարարության կողմից ՏՏ ոլորտի վարչական վիճակագրական ռեգիստրի վարման կարգը: Աշխատանքներ են տարվել ՏՏ ոլորտի վարչական վիճակագրական ռեգիստրի տեղեկատվական համակարգի ստեղծման ուղղությամբ:

2015թ. մայիսի 26-ին տեղի է ունեցել «Մայքրոսոֆթ» ընկերության պատվիրակության այցը Հայաստան, որի շրջանակում ՀՀ կառավարությունում ընկերության հետ ստորագրվել են նոր համաձայնագրեր՝ ուղղված ՀՀ-ում Մայքրոսոֆթ ինովացիոն կենտրոնի հենքով «ամպային» և բջջային լուծումների տարածաշրջանային կենտրոնի հիմնմանը, Հայաստանում կիբեռանվտանգության կենտրոնի ստեղծմանն աջակցությանը, կրթական ոլորտում համագործակցությանը, մտավոր սեփականության պաշտպանությանն ուղղված համատեղ ծրագրերի և այլ նախաձեռնությունների իրականացմանը: Համաձայնագրերի շրջանակներում, ՀՀ կառավարության կարիքների համար համակարգչային լիցենզիոն ծրագրային ապահովումն իրականացնելու նպատակով, ՀՀ կառավարությունը ձեռք է բերել 3000 «Մայքրոսոֆթ» լիցենզիոն ծրագրային ապահովման փաթեթներ, որոնց գումարը վճարվելու է 3 տարիների ընթացքում: ՀՀ կառավարության կողմից արդեն իսկ վճարվել է լիցենզիոն փաթեթների առաջին տարվա համար անհրաժեշտ գումարը: Միաժամանակ, «Մայքրոսոֆթ» ընկերության համակարգչային լիցենզիոն ծրագրային ապահովման փաթեթների բաշխման չափաքանակների որոշման և փաթեթների տրամադրման նպատակով մշակվել և ՀՀ էկոնոմիկայի նախարարի 18.08.2015թ. N1160-Ն հրամանով հաստատվել է Համակարգչային լիցենզիոն ծրագրային ապահովման փաթեթների պահանջվող չափաքանակների վերաբերյալ հայտերի ստացման և դրանց բավարարման կարգը: ՀՀ կառավարության անվտանգության ծրագրի շրջանակում 2015թ. հուլիսի 21-ից 23-ը երկու պետական կառույցների ներկայացուցիչներ մասնակցել են «Մայքրոսոֆթ» ընկերության գլխամասում կազմակերպված Մայքրոսոֆթի անվտանգության կոնֆերանսին: Բացի այդ, «Մայքրոսոֆթ» ընկերության հետ համագործակցության հետագա ուղղությունները և նոր համատեղ ծրագրերի իրականացման հնարավորությունը քննարկելու նպատակով ընկերության կողմից 2015թ. սեպտեմբերի 20-ից 25-ը կազմակերպվել է ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալի այցը «Մայքրոսոֆթ» ընկերության գլխամաս՝ Ռեդմոնդ և Նյու Յորք:

2015թ. մայիսի 27-ին տեղի է ունեցել Երևանի համաֆինանսավորվող դրամաշնորհային մրցույթի ամփոփումը, որի ընթացքում գնահատող հանձնաժողովին իրենց ներդրումային ծրագրերը ներկայացրեցին տեխնոլոգիական ոլորտի 23 ընկերություններ և թիմեր Երևանից: Մրցույթի արդյունքում հաղթող ճանաչվեցին 7 ծրագրեր:

2015թ. հունիսի 19-ից 20-ը տեղի է ունեցել «Խելացի լուծումներ խելացի բիզնեսի համար» խորագրով 8-րդ ամենամյա «Դիջիթեք» բիզնես ֆորումը, որին մասնակցեցին և բիզնեսի արդյունավետության բարձրացմանն ուղղված իրենց տեխնոլոգիական լուծումները ներկայացրեցին 70 տեղական և արտասահմանյան կազմակերպություններ:

Աշխատանքներ են իրականացվել 2015թ. հոկտեմբերի 2-ից 4-ը «Երևան Էքսպո» ցուցահանդեսային կենտրոնում կայանալիք միջազգային ամենամյա «Դիջիթեք Էքսպո 2015» տեղեկատվական, հեռահաղորդակցման և բարձր տեխնոլոգիաների ցուցահանդեսի և 2015թ. հոկտեմբերի 12-ին Հայաստանում ու հոկտեմբերի 14-ին Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում կայանալիք «Արմթեք 2015» բարձր տեխնոլոգիաների ոլորտի ամենամյա գլոբալ համաժողովի կազմակերպման ուղղությամբ:

Շարունակվել է ՀԲ վարկային ծրագրի շրջանակներում Վենչուրային կապիտալի/սկսնակ ձեռնարկությունների աջակցման հիմնադրամի, Հայաստանում «IBM»-ի նորարարական լուծումների և տեխնոլոգիաների կենտրոնի հիմնման, Գյումրու և Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնների ծրագրերի իրականացումը:

Շարունակվել է Մայքրոսոֆթ ինովացիոն կենտրոնի, Հայ-հնդկական ՏՀՏ գերազանցության կենտրոնի, «mLab ECA» մոբայլ լուծումների տարածաշրջանային լաբորատորիայի, Հայկական ազգային

ճարտարագիտական լաբորատորիայի (ANEL) ծրագրերի իրականացումը և վերջիններիս շրջանակներում որակյալ տեխնոլոգիական մասնագետների պատրաստումը և վերապատրաստումը:

«Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի և առնչվող ՀՀ օրենքների նախագծերի փաթեթի մշակում և ներկայացում

ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից մշակվել և ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2015թ. հունիսի 29-ի N01/29.7.3/5026-15 գրությամբ ՀՀ կառավարության աշխատակազմ է ներկայացվել «Զբոսաշրջության մասին», «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին», «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքում լրացումներ կատարելու մասին», «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին», «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթը:

Համաձայն ՀՀ վարչապետի 2015թ. օգոստոսի 17-ի N02/23.20/14067-15 հանձնարարության՝ նախագծերի փաթեթը լրացուցիչ քննարկվել և ՀՀ էկոնոմիկայի նախարարության 2015թ. դեկտեմբերի 7-ի N01/15.2.2/9790-15 գրությամբ ներկայացվել է ՀՀ կառավարության աշխատակազմ: Ի կատարումն ՀՀ վարչապետի 2015թ. դեկտեմբերի 16-ի N02/23.20/21441-15 հանձնարարության՝ փաթեթը ներկայացվել է կարգավորման ազդեցության գնահատմանը և ՀՀ արդարադատության նախարարության պետական փորձագիտական եզրակացությանը, որից հետո կներկայացվի ՀՀ կառավարության աշխատակազմ:

«Զբոսաշրջությանն աջակցության ծառայություններ» 2015 թվականի ծրագրի իրականացում

Հայկական զբոսաշրջային արդյունքի միջազգային և ներքին շուկաներում խթանում.

- Տպագրվել է 3000 օրինակ Ջերմուկ քաղաքի ֆոտոալբոմը անգլերեն և իսպաներեն լեզուներով: Նախապատրաստական աշխատանքներ են տարվել Հայաստանը և Երևանը ներկայացնող 20 բրոշյուրների և քարտեզների տպագրության համար՝ 20 հազարական օրինակով:
- Մշակվել են ՀՀ մարզերում 40 քայլարշավային երթուղիներ և տեղադրվել են www.wikiloc.com միջազգային կայքում՝ նպատակ ունենալով Հայաստանում խթանելու արկածային զբոսաշրջությունը և ներգրավելու նոր զբոսաշրջիկներ:
- Նկարահանվել է 10 րոպե տևողությամբ հոլովակ, որտեղ ներկայացված է ՀՀ զբոսաշրջային գրավչությունը 4 հիմնական ուղղություններով՝ ՀՀ բնաշխարհ, մշակույթ, կրոն և խոհանոց-հյուրընկալություն:
- Համահայկական աշխարհագրական ասոցիացիայի հետ համագործակցությամբ պատկաստվել և հանրային հեռուստատեսությամբ ապահովվել է «Բացահայտիր Հայաստանը» և «Երևան» հեռուստածրագրերի հեռարձակումը: Հաղորդումների միջոցով ներկայացվել են Հայաստանի պատմական, ճարտարապետական կոթողներն ու հուշարձանները, բնակավայրերի անցյալն ու ներկան, գեղատեսիլ վայրերը, ավանդույթները, առեղծվածային կողմերը:
- Իտալական Auctoria ընկերության հետ կնքվել է պայմանագիր հանրաճանաչ իտալական ULISSE MAGAZINE (Alitalia) ամսագրում ՀՀ զբոսաշրջային արդյունքը ներկայացնող հոդվածի տպագրման համար: Հայկական զբոսաշրջային արդյունքը Ռուսաստանի ամենահեղինակավոր «Оранжевый

гид» և «Красный гид» ուղեցույցերում ընդգրկելու նպատակով համաձայնություն է ձեռք բերվել «Путеводители Эксмо» ընկերության հետ:

- Ֆինանսական աջակցություն է ցուցաբերվել Գառնիի, Գորիսի, Դիլիջանի, Ծաղկաձորի և Սևանի զբոսաշրջային տեղեկատվական կենտրոններին:

Միջազգային հեղինակավոր զբոսաշրջային ցուցահանդեսներում Հայաստանի և հայկական զբոսաշրջային արդյունքի ներկայացում.

- 2015թ. հունվարի 28-ից փետրվարի 1-ը 3 զբոսաշրջային ընկերությունների մասնակցությամբ Հայաստանի զբոսաշրջային գրավչությունները ներկայացվել են Մադրիդի «Fitur'2015» միջազգային ամենամյա զբոսաշրջային ցուցահանդեսին:
- 2015թ. մարտի 4-ից 8-ը 16 զբոսաշրջային ընկերությունների մասնակցությամբ Հայաստանի զբոսաշրջային գրավչությունները ներկայացվել են Բեռլինում կայացած «ITB'2015» միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսին:
- 2015թ. մարտի 18-ից 21-ը 14 զբոսաշրջային ընկերությունների մասնակցությամբ Հայաստանի զբոսաշրջային գրավչությունները ներկայացվել են Մոսկվայում տեղի ունեցած «MITT'2015» միջազգային ցուցահանդեսին:
- 2015թ. սեպտեմբերի 29-ից հոկտեմբերի 2-ը 4 զբոսաշրջային ընկերություններ ներկայացրել են Հայաստանի զբոսաշրջային գրավչությունները Փարիզում կայացած «TopResa'2015» զբոսաշրջային միջազգային ցուցահանդեսին:
- 2015թ. հոկտեմբերի 8-ից 10-ը Հայաստանի տեղական 4 զբոսաշրջային ընկերություններ ներկայացրել են Հայաստանի զբոսաշրջային գրավչություններն Իտալիայի Ռիմինի քաղաքում կայացած «TTG Incontri-2015» միջազգային ցուցահանդեսին:
- 2015թ. նոյեմբերի 2-ից 5-ը Հայաստանի 6 զբոսաշրջային ընկերությունների մասնակցությամբ Հայաստանի զբոսաշրջային գրավչությունները ներկայացվել են Լոնդոնում տեղի ունեցած «World Travel Market 2015» զբոսաշրջային միջազգային ամենամյա ցուցահանդեսին:
- 2015թ. նոյեմբերի 26-ից 28-ը Հայաստանի 3 զբոսաշրջային ընկերություններ Հայաստանի զբոսաշրջային գրավչությունները ներկայացրել են Լեհաստանում կայացած «TT Warsaw 2015» միջազգային ցուցահանդեսին:

Օտարերկրյա լրագրողների և զբոսաշրջության ոլորտի մասնագետների և պոտենցիալ ներդրողների Հայաստան ճանաչողական այցերի կազմակերպում. Իրականացվել է իսրայելական, ռուսական, ավստրիական, գերմանական ճամփորդական շուրջ 170 լրագրողների և ոլորտի մասնագետների ճանաչողական այցեր Հայաստան: Այցերի արդյունքում տպագրվել են բազմաթիվ հոդվածներ ՀՀ զբոսաշրջային արդյունքի վերաբերյալ: Իրականացվել է իտալական RAI պետական հեռուստառադիոընկերության ներկայացուցիչների ճանաչողական շրջայցը Հայաստան, որի արդյուքնում նկարահանվել է վավերագրական ֆիլմ:

Ավանդական տոնակատարությունների և փառատոների կազմակերպման ապահովում.

- Սեպտեմբերի 12-ին ՀՀ Լոռու մարզի Ախթալա քաղաքում կայացել է հինգերորդ «Հայոց ավանդական տոնածիսական ուտեստների մրցույթ փառատոնը»:
- Հոկտեմբերի 3-ից 4-ը ՀՀ Վայոց ձորի մարզի Արենի համայնքում կայացել է «Գինու» ամենամյա փառատոնը:

- Հուլիսի 4-ին Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում, Ամարասի վանքի շրջակայքում մեկնարկել է «Սյունյաց ավանդույթներ» ամենամյա փառատոնը՝ «ԹՈՒԹ» խորագրով, այնուհետև փառատոնի հիմնական փուլը անցկացվել է ՀՀ Սյունիքի մարզի Գորիս քաղաքում:
- Օգոստոսի 29-ին ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան քաղաքում անցկացվել է «Մշակութային վերածնունդ» փառատոնը:
- Հոկտեմբերի 10-ին ՀՀ Վայոց ձորի մարզի Խաչիկ գյուղում անցկացվել է «Գաթայի» փառատոնը:

Հյուրանոցային տնտեսության օբյեկտների որակավորման գործընթաց.

- Երևան քաղաքում գտնվող «Փարիզ Հոթել» հյուրանոցին շնորհվել է «4 աստղանի հյուրանոց» որակավորման կարգ,
- ՎերինՊտղնի գյուղում գտնվող «Մուլտի Գրանդ Հոթել» հյուրանոցին շնորհվել է «5 աստղանի «Դելյուքս»» որակավորման կարգ,
- Ծաղկաձորում գտնվող «Գոլդեն Փելիս Հյուրանոց» հյուրանոցին շնորհվել է «5 աստղանի «Դելյուքս»» որակավորման կարգ,
- Երևան քաղաքում գտնվող «Իմպերիալ Պալաս Հոթել» հյուրանոցին շնորհվել է «4 աստղանի հյուրանոց» որակավորման կարգ:

Մարդկային ռեսուրսների զարգացում. Երևանի Զբոսավարների միջազգային ուսումնական կենտրոնը մարտի 13-ից 17-ը անցկացրել է միջազգային դասընթաց, որին մասնակցել են 10 զբոսավար՝ 4-ը՝ Հայաստանից, 6-ը՝ Իրանից: Նոյեմբերի 6-ից մեկնարկել է Հայաստանում սկսնակ զբոսավարների պատրաստման 6 ամսյա դասընթացը:

Զբոսաշրջային տների (B&B) **համակարգի և մարդկային ռեսուրսների զարգացում**. Սեպտեմբերի 25-ից 28-ը կազմակերպվել են սեմինարներ ՀՀ Լոռու մարզի Ալավերդի քաղաքի 20 բնակիչների մասնակցությամբ: Տեղի 10 զբոսաշրջային տների ներկայացուցիչներին տրամադրվել է մասնագիտական խորհրդատվություն: Միջոցառման շրջանակներում տպագրվել է ՀՀ Լոռու մարզի հյուրատների ցանկը ներկայացնող բուկլետներ 3000 օրինակով:

ՀՀ մրցունակ և շարունակական օդային փոխադրումների ծառայությունների մատուցման ծրագրի խթանում. Միջոցառման շրջանակներում 2015 թվականին ապահովվել է մասնակցությունը 3 համաժողովների.

- Հայկական պատվիրակությունը ապրիլի 12-15-ը Մեծ Բրիտանիայի Աբերդին քաղաքում մասնակցել է «Եվրոպայի ուղիների զարգացում» խորագրով (RoutesEurope 2015) համաժողովին: Համաժողովի շրջանակներում երկկողմ հանդիպումներ են անցկացվել AirBerlin, BrusselsAirlines, CzechAirlines, VuelingAirlines, WizzAir, Norwegian, EasyJet և Alitalia ավիաընկերությունների ներկայացուցիչների հետ՝ վերջիններիս ներկայացնելով հայկական շուկայի նոր հնարավորությունները: Բանակցությունների ընթացքում քննարկվել են ավիաընկերությունների կողմից հայկական շուկայի սպասարկման հնարավորությունները:
- Հայկական պատվիրակությունը հուլիսի 5-ից 7-ը մասնակցել է Թբիլիսիում տեղի ունեցած «RoutesSilkRoad 2015» համաժողովին: Համաժողովին ներկայացվել է Ասիայի, ԱՊՀ, Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի, Մերձավոր Արևելքի ավիացիոն և զբոսաշրջային ներուժը՝ միաժամանակ, հանդիսանալով նոր ավիափոխադրումների խթանման և ավիացիոն ծառայությունների զարգացման արդյունավետ հարթակ: Համաժողովի ընթացքում ներկայացվել է Հայաստանի

զբոսաշրջության խթանման և ՀՀ կառավարության որդեգրած «Բաց երկնքի» քաղաքականության ուղղությամբ իրականացվող քայլերը և արդյունքները, միջազգային զբոսաշրջային շուկաներում ՀՀ ներկայացվածության մակարդակի բարձրացման հեռանկարները: Բանակցություններ են տարվել «Routes CIS 2016»-ը Հայաստանում անցկացնելու վերաբերյալ:

- Հայկական պատվիրակությունը սեպտեմբերի 18-ից 23-ը Հարավաֆրիկյան Հանրապետության Դուրբան քաղաքում մասնակցել է «Համաշխարհային ուղիների զարգացում» խորագրով 21-րդ համաժողովին (WorldRoutes 2015): Հայկական պատվիրակությունը հանդիպում է ունեցել 20 ավիաընկերությունների ներկայացուցիչների հետ: Բանակցությունները հիմնականում ընթացել են ավիաընկերությունների երթուղիներիներում դեպի Հայաստան ուղղությունների ընդգրկման շուրջ:

Միջազգային համագործակցության իրականացում.

- Փետրվարի 11-ից 14-ը Իրանի Իսլամական Հանրապետության (ԻԻՀ) Թեհրան քաղաքում կայացել է ՀՀ և ԻԻՀ միջև զբոսաշրջության բնագավառում համագործակցության տեխնիկական հանձնաժողովի երրորդ նիստը: Նիստի ընթացքում քննարկվել են ՀՀ և ԻԻՀ միջև զբոսաշրջության բնագավառում համագործակցության հուշագրի նախագիծը, ՀՀ և ԻԻՀ տարածաշրջանային զբոսաշրջային միասնական արդյունքի ձևավորման և միջազգային շուկայում պատշաճ ներկայացման, երկու երկրներում կազմակերպվող զբոսաշրջային ցուցահանդեսներին, տոնավաճառներին և այլ միջոցառումներին փոխադարձ մասնակցության համար արտոնյալ պայմանների տրամադրմանն ուղղված հարցեր:
- ՀՀ Նախագահի Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն (ՉԺՀ) կատարած պաշտոնական այցի շրջանակներում 2015թ. մարտի 25-ին ստորագրվել է «ՀՀ կառավարության և ՉԺՀ կառավարության միջև զբոսաշրջության բնագավառում համագործակցության մասին» համաձայնագիրը: Ձեռք բերված պայմանավորվածությանը համաձայն 2015թ. նոյեմբերի 24-ից 28-ը կազմակերպվել է ՉԺՀ Զբոսաշրջության ազգային ադմինիստրացիայի և չինական զբոսաշրջային օպերատորների ներկայացուցիչներից կազմված պատվիրակության այցը Հայաստան:
- Մայիսի 26-ից 30-ը Խորվաթիայի Հանրապետության Ռովին քաղաքում հայկական պատվիրակությունը մասնակցել է ՄԱԿ ԶՀԿ Գործադիր Խորհրդի 100-րդ հոբելյանական նստաշրջանի աշխատանքներին, որի նախնական օրակարգում, մասնավորապես ներառված էր «Prevention of Promotion of Conflict Zones as Tourism destination and Using Tourism for Illegal Purposes» («Կոնֆլիկտային տարածքներում զբոսաշրջային քարոզչությունը արգելելու վերաբերյալ»)՝ հակաղարաբաղյան բանաձևի նախագծի վերաբերյալ ՄԱԿ ԶՀԿ Զբոսաշրջության էթիկայի համաշխարհային հանձնաժողովի կարծիքի քննարկումը: Այս հարցի շրջանակներում ներկայացվել էր ադրբեջանական կողմի բանաձևը՝ լրամշակված ՄԱԿ ԶՀԿ Զբոսաշրջության էթիկայի համաշխարհային հանձնաժողովի կարծիքի հիման վրա: Ադրբեջանական կողմը գրավոր ներկայացրել էր բանաձևի նախագիծը՝ պնդելով դրա ընդունումը ՄԱԿ ԶՀԿ Գործադիր խորհրդի կողմից և ներկայացումը ՄԱԿ ԶՀԿ Գլխավոր ասամբլեային: Արդյունքում, ՀՀ արտաքին գործերի և էկոնոմիկայի նախարարությունների համատեղ ջանքերով ադրբեջանական կողմի ներկայացրած բանաձևի ընդունումը կանխվել է: ՄԱԿ ԶՀԿ Գործադիր խորհուրդը չի ընդունել որոշում՝ հարցը ներկայացնել ՄԱԿ ԶՀԿ Գլխավոր ասամբլեայի քննարկմանը, այլ որոշել է ընդունել ի գիտություն ՄԱԿ ԶՀԿ Զբոսաշրջության էթիկայի համաշխարհային հանձնաժողովի կարծիքը:
- Սեպտեմբերի 11-ից 18-ը Կոլումբիայի Հանրապետության Մեդելին քաղաքում հայկական պատվիրակությունը մասնակցել է ՄԱԿ ԶՀԿ Գլխավոր ասամբլեայի 21-րդ նստաշրջանի և դրա

շրջանակներում նաև ՄԱԿ ԶՀԿ Գործադիր խորհրդի 101-րդ, 102-րդ և ՄԱԿ ԶՀԿ Եվրոպական հանձնաժողովի 58-րդ նստաշրջանների աշխատանքներին: Մասնավորապես քննարկվել է «Զբոսաշրջիկների և զբոսաշրջային ծառայություններ մատուցողների իրավունքների պաշտպանության մասին» ՄԱԿ ԶՀԿ կոնվենցիայի նախագիծը: ՄԱԿ ԶՀԿ Գլխավոր քարտուղարի, գործադիր տնօրենի, Եվրոպայի տարածաշրջանային տնօրենի և ՄԱԿ ԶՀԿ աֆիլացված անդամների գործադիր տնօրենի հետ քննարկման արդյունքում պայմանավորվածություն է ձեռք բերվել 2016թ. ՄԱԿ ԶՀԿ աֆիլացված անդամների տարեկան համաժողովը ՀՀ-ում անցկացնելու վերաբերյալ:

- 2015 թվականի նոյեմբերի 2-4-ը Մեծ Բրիտանիայի Լոնդոն քաղաքում ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղեկալը մասնակցել է ՄԱԿ ԶՀԿ «Փոփոխվող շուկայի նոր մարտահրավերներ» խորագրով նախարարական 9-րդ վեհաժողովի աշխատանքներին: Վեհաժողովի շրջանակներում քննարկվել են համաշխարհային զբոսաշրջային արդյունաբերության նոր մարտահրավերները, դրանց դիմակայելուն ուղղված միջոցառումները և սպառողների և գործարար համայնքի իրավունքների պաշտպանությանն ուղղված միջոցառումներ:
- Նոյեմբերի 13-ին ապահովվել է ՀՀ էկոնոմիկայի նախարարության ներկայացուցչի մասնակցությունը՝ Մոսկվայում «Արցախյան օրերի» շրջանակներում Արցախի զբոսաշրջային ներուժի ներկայացմանը և ռուսաստանյան զբոսաշրջային օպերատորների հետ հանդիպմանը:

Քաղաքացիական ավիացիայի բնագավառում միջազգային իրավապայմանագրային հարաբերությունների վերանայում

Բանակցություններ են վարվել մի շարք պետությունների ավիացիոն իշխանությունների հետ գործող համաձայնագրերի վերանայման, ինչպես նաև նոր համաձայնագրերի կնքման շուրջ: Մասնավորապես.

- 2015թ. դեկտեմբերին ստորագրվել է Լյուքսեմբուրգի Մեծ Դքսության և ՀՀ միջև օդային հաղորդակցությունների մասին միջկառավարական համաձայնագիրը: Երկու կողմերի ավիաընկերություններին փոխադարձաբար օդի 5-րդ ազատության իրավունք է տրամադրվել ուղևորափոխադրումների և 7-րդ ազատության իրավունք՝ բեռնափոխադրումների իրականացման համար:
- 2015թ. դեկտեմբերի 7-ին Եվրոպական Հանձնաժողովը հավանության է արժանացրել ԵՄ ավիացիոն նոր ռազմավարությունը, որը ներառում է նաև Հայաստանի հետ Ընդհանուր ավիացիոն գոտու մասին հանաձայնագրի բանակցման մանդատ ստանալու համար անհրաժեշտ փաթեթը: 2015թ. դեկտեմբերի 10-ին ՀՀ էկոնոմիկայի նախարարի գլխավորած պատվիրակությունը Բրյուսելում հանդիպել է Եվրոպական Հանձնաժողովի անդամ, ԵՄ Տրանսպորտի հարցերով հանձնակատար Վիոլետա Բուլչի հետ, քննարկվել է Համաձայնագրի ստորագրման համար անհրաժեշտ գործողությունների պլանը, ինչը հնարավորություն կտա ազատականացնել օդային հաղորդակցությունների ոլորտը ԵՄ անդամ պետությունների հետ:
- Կատարվել են աշխատանքներ Իտալիայի Հանրապետության ավիացիոն իշխանությունների հետ՝ 2000 թվականին կնքված Հուշագրում փոփոխություններ կատարելու շուրջ: Հուշագրի նախագիծը աշխատանքնային քննարկման փուլում է:
- Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Թագավորության և ՀՀ միջև օդային հաղորդակցությունների մասին համաձայնագրի տեքստը քննարկման փուլում է: ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը բրիտանական կողմի ներկայացրած համաձայնագրի նախագծի վերաբերյալ պատասխան առաջարկություններ է ներկայացրել, ինչպես նաև կապ է հաստատվել բրիտանական կողմի հետ նախագծի վերջնական լրամշակման նպատակով:

- Վերանայվել է 2012թ. նոյեմբերի 20-ին Աբու Դաբիում ստորագրված ՀՀ կառավարության և Արաբական Միացյալ Էմիրությունների կառավարության միջև միմյանց համապատասխան տարածքների միջև և դրանցից դուրս օդային հաղորդակցության մասին համաձայնագիրը: 2015թ. հոկտեմբերին ՀՀ կառավարությունը համաձայնություն է տվել համաձայնագրի կնքմանը:
- 2015թ. դեկտեմբերի 14-ից 18-ը Քուվեյթում կայանացած հայ-քուվեյթյան միջկառավարական համատեղ հանձնաժողովի 2-րդ նիստի շրջանակներում քուվեյթյան կողմը ներկայացրել է Փոխըմբռնման հուշագրի նախագիծ, որը ներկայումս գտնվում է քննարկման փուլում:
- Լրամշակվել է Նորվեգիայի Թագավորության ավիացիոն իշխանությունների կողմից ներկայացված միջկառավարական համաձայնագրի նախագիծը, ինչպես նաև նախապատրաստվել է Սկանդինավյան պետությունների հետ համատեղ քննարկման ենթակա փաթեթը:
- Լրամշակվել է ՀՀ և Իսրայելի Պետության միջև օդային հաղորդակցությունների մասին համաձայնագրի տեքստը: Կատարված փոփոխությունների վերաբերյալ իսրայելյան կողմի առաջարկությունները ստանալուց հետո նախագիծը կներկայացվի ՀՀ արտաքին գործերի նախարարություն:
- Վերանայվել է Չինաստանի Ժողովրդական Հանրապետության հետ քաղաքացիական ավիացիայի վերաբերյալ միջկառավարական համաձայնագրի տեքստը, որի վերաբերյալ ստացվել են չինական կողմի առաջարկությունները: 2015թ. դեկտեմբերի 11-ին Չինաստանում տեղի ունեցած միջկառավարական համաժողովի շրջանակներում ձեռք է բերվել պայմանավորվածություն՝ տեքստի համաձայնեցման ուղղությամբ աշխատանքներ իրականացնելու վերաբերյալ:
- Սինգապուրի Հանրապետության ավիացոն իշխանությունների կողմից հայկական կողմին են փոխանցվել Օդային հաղորդակցությունների մասին համաձայնագրի և փոխըմբռնման հուշագրի նախագծեր: Նախագծերը քննարկվել են և պատասխան առաջարկությունները ոչ պաշտոնապես ներկայացվել են սինգապուրյան կողմի քննարկմանը: Սինգապուրի ավիացիոն իշխանությունները առաջարկել են տեքստը վերջնականապես համաձայնեցնել Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության հովանու ներքո կազմակերպվող ICAN համաժողովի շրջանակներում:
- Լրամշակվել է 2014թ. նոյեմբերին նշագրված Լեհաստանի Հանրապետության և ՀՀ միջև օդային հաղորդակցությունների մասին Համաձայնագրում փոփոխություն կատարելու մասին արձանագրությունը, որի ստորագրմանը ՀՀ կառավարությունը հավանություն է տրվել 2015թ. մարտին:
- Կազմվել է Բուլղարիայի Հանրապետության հետ օդային հաղորդակցությունների մասին համաձայնագրի նախագիծը, պատրաստվել է համապատասխան բանակցային փաթեթ, 2015թ. հոկտեմբերին ՀՀ կառավարությունը համաձայնություն է տվել վերոնշյալ համաձայնագրի կնքմանը:
- Ուկրաինայի ավիացիոն իշխանությունների հետ օդային հաղորդակցությունների ոլորտի ազատականացման շուրջ բանակցությունները վարվում են դեռևս 2014թ. սկզբից: 2015 թվականի հուլիսին Ուկրաինայի ավիացիոն իշխանություններից ստացվել է առաջարկություն «Օդեսա» միջազգային օդանավակայանում Բաց երկնքի ռեժիմ հայտարարելու վերաբերյալ՝ երկկողմանիորեն հանելով գործող սահմանափակումները: Հաշվի առնելով, որ նշված սահմանափակումների վերացումը հնարավոր է իրականացնել միայն միջկառավարական համաձայնագրի վերանայմամբ՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը պատասխան գրությամբ դիմել է ուկրաինական կողմին՝ կրկին առաջարկելով վերանայել համաձայնագիրը, իսկ մինչ այդ ուկրաինական փոխադրողներին առաջարկել է սպասարկել երթուղիները դեպի Գյումրու «Շիրակ» օդանավակայան:

- 2015 թվականի հուլիսին քննարկվել է Սիրիայի Հանրապետության հետ միջկառավարական համաձայնագրի վերանայման նպատակահարմարության հարցը:
- Լրամշակվել է Հունաստանի Հանրապետության հետ օդային հաղորդակցության մասին համաձայնագրում փոփոխություն կատարելու մասին արձանագրությունը, որը նշագրվել է 2014թ.-ին:

Արտահանման շուկաներ մուտքի հնարավորությունների ընդլայնում

ԵԱՏՄ համագործակցություն: Մշակվել և ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել «Վերամշակում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով բացթողնման համար թույլատրվող ապրանքների ցանկը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի փաթեթը:

Շարունակվում են աշխատանքները ԵԱՏՄ անդամ-պետությունների և Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության միջև «Ազատ առևտրի գոտու մասին» ստորագրված Համաձայնագրի շրջանակներում վիետնամական շուկա հայկական ծագման ալկոհոլային արտադրանքի ծավալների ավելացման նպաստավոր պայմանների ապահովման ուղղությամբ:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի և ԵԱՏՄ անդամ-պետությունների ներկայացուցիչների մասնակցությամբ մեկնարկել են աշխատանքներն երրորդ երկրների հետ (Եգիպտոսի Արաբական Հանրապետության, Իսրայել պետության, Հնդկաստանի Հանարպետության, Ինդոնեզիայի Հանրապետության) ԵԱՏՄ անդամ-պետությունների արտադրանքի՝ արտոնյալ ռեժիմով արտահանումն ու ներմուծումն ազատականացնելու նպատակահարմարության վերաբերյալ: Ներկայումս քննարկվում է նաև Կամբոջայի Թագավորության, Թունիսի Հանրապետության հայտը ԵԱՏՄ անդամ-պետությունների հետ «Ազատ առևտրի գոտու մասին» համաձայնագիր կնքելու առնչությամբ:

Բացի վերոնշյալ համաձայնագրով իրականացվելիք առևտրային համագործակցությունից՝ առևտրի խթնման ուղղությամբ աշխատանքներ ենք տարվում առևտրատնտեսական փաստաթղթերի շրջանակներում Չինաստանի Ժողովրդական Հանրապետության, Պերուի Հանրապետության, Չիլիի Հանրապետության և Կորեայի Հանրապետության հետ:

ԵՄ համագործակցություն: 2015թ. հոկտեմբերի 16-ին Երևանում տեղի ունեցավ ՀՀ-ԵՄ առևտրի, տնտեսական և համապատասխան իրավական հարցերով ենթակոմիտեի հերթական՝ 14-րդ նիստը, իսկ նոյեմբերի 4-ին՝ ՀՀ-ԵՄ համագործակցության կոմիտեի հերթական՝ 16-րդ նիստը:

2015թ. ընթացքում շարունակվել է համագործակցությունը ԵՄ Արևելյան գործընկերության «Տնտեսական ինտեգրման և ԵՄ քաղաքականություններին մոտարկման» պլատֆորմի և վերջինիս ներքո ստեղծված պանելների շրջանակներում:

Շարունակվել է ԵՄ «Արտոնությունների ընդլայնված և համալրված համակարգ (GSP+)» արտոնյալ առևտրային ռեժիմի մոնիտորինգի գործընթացը, որի շրջանակներում ռեժիմից օգտվելու համար նախապայման հանդիսացող 27 միջազգային կոնվենցիաների իրականացման վերաբերյալ հայկական կողմի 2-րդ զեկույցը պատրաստվել և ԵՄ կողմին է ներկայացվել 2015թ. մայիսին:

2015թ. հոկտեմբերին եվրոպական կողմին է տրամադրվել Հայաստանին ԵՄ շուկայական տնտեսության կարգավիճակի շնորհման վերաբերյալ հայկական կողմի զեկույցն ու փաստաթղթերի ամբողջական փաթեթը:

2015թ. աշխատանքներ են իրականացվել ՀՀ-ԵՄ ընթացիկ աջակցության ծրագրերով նախատեսված միջոցառումների իրականացման ուղղությամբ, ԵՄ և ՀՀ միջև կնքվել են «Աջակցություն Հայաստանում

ՓՄՁ ոլորտի զարգացմանը» և «Աջակցություն Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանությանը» ֆինանսավորման համաձայնագրերը: ՀՀ և ԵՄ միջև կնքվել է նաև «Ձեռնարկությունների և փոքր ու միջին ձեռնարկությունների մրցունակություն (COSME) (2014-2020թթ.)» ծրագրին Հայաստանի Հանրապետության մասնակցության վերաբերյալ» համաձայնագիրը:

Համագործակցություն այլ երկրների հետ: 2015թ. մայիսի 7-ին ՀՀ կառավարության և ԱՄՆ կառավարության միջև ստորագրվել է առևտրի և ներդրումների շրջանակային Համաձայնագիրը՝ հայ-ամերիկյան տնտեսական համագործակցության ամրապնդման և հետագա խորացման, կողմերի միջև ապրանքների և ծառայությունների առևտրի ընդլայնման ու դիվերսիֆիկացման, գործարար նախաձեռնությունների ակտիվացման նպատակով: Համաձայնագրով հիմնվել է Հայաստան-ԱՄՆ առևտրի և ներդրումների հարցերով Խորհուրդը, որի անդրանիկ նիստը կայացել է 2015թ. նոյեմբերի 17-ին Երևանում: Նիստի արդյունքում ընդունվել է գործողությունների համատեղ ծրագիր և նախանշել փոխադարձ առևտրի և ներդրումների խթանման հարցում կատարվելիք հետագա քայլերը և համագործակցության ընդլայնման ուղղությունները:

Կատարվել են աշխատանքներ շուրջ 92 երկկողմ և 59 բազմակողմ համաձայնագրերի կնքման, փորձաքննության և վավերացման ուղղությամբ:

2015թ. նոյեմբերի 26-ից 27-ը Վիլնյուսում կայացել է առևտրատնտեսական համագործակցության հայ-լիտվական միջկառավարական հանձնաժողովի առաջին նիստը, իսկ 2015թ. դեկտեմբերի 11-ին ք.Պեկինում՝ Առևտրատնտեսական հարցերով հայ-չինական համատեղ հանձնաժողովի ութերորդ նիստը: Արդյունքում ստորագրվել են նիստերի արձանագրությունները և ըստ ոլորտների սահմանվել են հետագա համագործակցության ուղղությունները: Միաժամանակ, նախարարությունը մասնակցել է հայ-իրանական, հայ-թուրքմենական, հայ-իրաքյան, հայ-քուվեյթյան, հայ-բուլղարական, հայ-ամերիկյան միջկառավարական հանձնաժողովների նիստերի աշխատանքներին:

Որակի ենթակառուցվածքների բարելավում

Մշակվել և ՀՀ կառավարության կողմից ընդունվել են «ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 26-ի Հայկական կոնյակների և հայկական կոնյակի սպիրտների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին N954-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության 2015թ. հուլիսի 30-ի N867-Ն, «ՀՀ կառավարության 2013թ. հունիսի 13-ի N623-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության 2015թ. օգոստոսի 31-ի N991-Ն, «ՀՀ կառավարության 2013թ. հունիսի 13-ի N623-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության 2015թ. սեպտեմբերի 9-ի N991 որոշումը և «ՀՀ կառավարության 2012թ. սեպտեմբերի 6-ի N1201-Ն որոշման մեջ փոփոխություն-ներ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության 2015թ. հուլիսի 2-ի N719-Ն որոշումները:

Մշտապես գործող ֆինանսատնտեսական կոմիտեի և ՀՀ կառավարության նիստերի ընթացքում քննարկվել են «Իրավաբանական անձանց ստուգաչափման իրավունքի տրամադրման կարգը հաստատելու մասին», «Սոցիալական և կենսական կարևոր նշանակություն ունեցող չափման միջոցները, դրանց ներկայացվող պահանջները և շուկայահանման կարգը սահմանելու մասին», «Ստուգաչափման և տեսակի հաստատման ենթակա չափման միջոցները սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծերը:

Մշակվել և ՀՀ կառավարություն են ներկայացվել «Ավտոմոբիլային տրանսպորտային միջոցներում սեղմված բնական գազով աշխատող վառելիքային համակարգին ներկայացվող պահանջների տեխ-

նիկական կանոնակարգը հաստատելու մասին» և «Էտալոնային լաբորատորիաներին ներկայացվող պահանջները և ճանաչման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծերը:

ՀՀ կառավարության 2015թ. փետրվարի 5-ի N86 որոշմամբ ՀՀ էկոնոմիկայի նախարարության «Հավատարմագրման ազգային մարմին» պետական ոչ առևտրային կազմակերպության ներկայացմամբ ԵԱՏՄ ռեեստրի լրամշակման նպատակով պարբերաբար համապատասխան տեղեկատվություն է ներկայացվել ԵԱՏՄ սերտիֆիկացման մարմինների և փորձարկման լաբորատորիաների վերաբերյալ: Ներկայումս ԵԱՏՄ միասնական ռեեստրում գրանցված են 5 սերտիֆիկացման մարմին և 13 փորձարկման լաբորատորիա, ինչը նպաստում է արտադրանքի ազատ տեղաշարժին ԵԱՏՄ անդամ երկրներում:

Ուսումնասիրվել և առաջարկություններ են ներկայացվել «ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգերով պահանջներ չսահմանված արտադրանքի անվտանգության ապահովման և շրջանառության կանոնների ու կարգի մասին», «ԵԱՏՄ անդամ-պետություններ չհանդիսացող երրորդ երկրների հետ փոխադարձ առևտրում տեխնիկական խոչընդոտների վերացման կարգի և պայմանների մասին» և «Չծխելու ծխախոտային արտադրանքի արտադրության, ներմուծման և շրջանառության արգելքի վերաբերյալ» միջազգային համաձայնագրերի ստորագրման նպատակահարմարության վերաբերյալ, ԱՊՀ «Համապատասխանության գնահատման մարմինների հավատարմագրման փոխադարձ ճանաչման մասին» համաձայնագրի նախագծի վերաբերյալ, ինչպես նաև «Օծանելիքակոսմետիկական արտադրանքի անվտանգության մասին», «Ցորենի անվտանգության մասին», «Մեքենաների և սարքավորումների անվտանգության մասին» տեխնիկական կանոնակարգերը և դրանցում փոփոխությունների կատարման վերաբերյալ գրությունները և պատասխաններ են ներկայացվել ԵԱՏՄ համապատասխան ստորաբաժանումներին:

ԳՈՐԾԱՐԱՐ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ ԵՎ ՓՄՁ-ԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԴԼԱՅՆՈՒՄ

Հայաստանի գործարար միջավայրի բարելավման միջոցառումների 2015 թվականի ծրագրի իրագործում

Հայաստանի գործարար միջավայրի բարելավման 2015թ. ծրագրում ներառված են 32 միջոցառումներ, որոնցից 14-ը իրականացվել են, 5-ը ներառվել են Գործարար միջավայրի բարելավման 2016թ. ծրագրի նախագծում, 1-ը ուժը կորցրած է ճանաչվել, իսկ 12-ը գտնվում են իրականացման փուլում, որոնցից 5-ը պահանջում են լրացուցիչ ֆինանսավորում: Ծրագրի շրջանակներում իրականացվել են հետևյալ միջոցառումները.

Ստեղծվել է ՀՀ կառավարության 05.12.2013թ. N1364-Ն որոշմամբ հաստատված կարգով նախատեսված ուղեկցող հաշվարկային փաստաթղթերի էլեկտրոնային եղանակով դուրսգրման հնարավորություն:

Ստեղծվել է հարկային մարմին ներկայացվող դիմումների, տեղեկանքների, հայտարարությունների էլեկտրոնային եղանակով ներկայացման հնարավորություն:

Հարկային և մաքսային ծառայությունների պաշտոնական ինտերնետային կայքերում ստեղծվել է դիմում-բողոքների առցանց ներկայացման հնարավորություն:

Տնտեսվարող սուբյեկտների համար նախնական հայտարարագրման մեխանիզմների կատարելագործման միջոցով մաքսային ձևակերպումների վրա ծախսվող ժամանակի կրճատման նպատակով

ընդունվել է ՀՀ ֆինանսների նախարարի 14.04.2015թ. «ՀՀ ԿԱ ՄՊԿ նախագահի 22.09.2003թ. N03/69-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N221-Ն հրամանը:

Ինժեներական ենթակառուցվածքի օբյեկտների կառուցման համար հողամասերի տրամադրման ընթացակարգերի հստակեցման և հնարավորինս կարճ ժամկետների սահմանման նպատակով ՀՀ կառավարության կողմից ընդունվել է ՀՀ կառավարության 2015թ. նոյեմբերի 12-ի «ՀՀ կառավարության 2001թ. ապրիլի 12-ի N286 որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» N1344-Ն որոշումը: Նշված ընթացակարգերի հստակեցմանը հաջորդել է ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 25.11.2015թ. N387-Ն որոշման ընդունումը, որով կրճատվել են որոշակի հզորության էլեկտրական էներգիայի միացման ժամկետները (35 օրով):

Ներդրվել է շինարարական թույլտվությունների տրամադրման էլեկտրոնային համակարգ:

Սեփականության իրավունքի գրանցման ոլորտում «Մեկ պատուհանի կանգառ» սկզբունքի ներդրման նպատակով մշակվել է «Հանրային ռեգիստրների վարման (գրանցման) միասնական սպասարկման կենտրոնների ներդրման հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը:

Մինչև սնանկության հայց ներկայացնելը վնասակար գործարքների վերանայման մեխանիզմների ներդրման նպատակով ՀՀ արդարադատության նախարարության կողմից մշակվել է «Սնանկության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ» հայեցակարգը:

Հարկ վճարողների իրազեկվածության բարձրացման նպատակով ՀՀ ՖՆ հարկային տեսչությունների և ուսումնական կենտրոնի կողմից պարբերաբար կազմակերպվել են սեմինարներ:

Տեսչական բարեփոխումների իրականացում՝ տեսչական համակարգի օպտիմալացման հայեցակարգին և գործողությունների ծրագրին համահունչ

Տեսչական բարեփոխումների իրականացման շրջանակներում՝ տեսչական համակարգի օպտիմալացման հայեցակարգին և գործողությունների ծրագրին համահունչ 2015թ. հունվարի 9-ին ուժի մեջ է մտել «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքը, որը ապահովում է տեսչական համակարգի օպտիմալացման և տեսչական մարմինների ձևավորման իրավական հիմքերը:

Տեսչությունների օպտիմալացման աշխատանքները սկսելու նպատակով տարեսկզբին իրականացվել են չորս ոլորտների քարտեզագրման աշխատանքներ, որոնք քննարկվել են «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովելու ընթացքին հետևելու նպատակով ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի նիստերում: Հաշվետու ժամանակահատվածում ամբողջովին կատարվել են «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների ծրագրով նախատեսված աշխատանքները՝ այդ թվում 2015թ. հոկտեմբերի 1-ին ընդունվել է «Տեսչական մարմինների որակի ապահովման ստորաբաժանումների կազմակերպման և գործունեության կարգը հաստատելու մասին» N1358–Ն ՀՀ կառավարության որոշումը:

2015թ. չորրորդ եռամսյակում միջգերատեսչական հանձնաժողովի նիստերում քննարկվել են ՀՀ ԱՆ առողջապահական պետական տեսչությունում առկա խնդիրները և տեսչական մարմնի ձևավորելու հարցը, ՀՀ էկոնոմիկայի նախարարության շուկայի վերահսկողության տեսչական մարմին ստեղծման և ՀՀ ֆինանսների նախարարության 2 տեսչությունների հարցերը:

Արդյունքում ստեղծվել է առաջին տեսչական մարմինը (ՀՀ էկոնոմիկայի նախարարության շուկայի վերահսկողության տեսչական մարմին), ընդունվել են ՀՀ կառավարության համապատասխան

որոշումներ, այդ թվում ՀՀ կառավարությունը հաստատել է ՀՀ էկոնոմիկայի նախարարության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի կառավարման խորհրդի աշխատակարգը հաստատելու մասին որոշումը: Նշված ուղղությամբ իրականացվել են «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքով նախատեսված բոլոր պահանջները, որի արդյունքում ձևավորվել է տեսչական մարմնի կառավարման խորհուրդը, գումարվել է խորհրդի անդրանիկ նիստը և խորհրդի անդամների որոշմամբ ՀՀ վարչապետին են ներկայացվել տեսչական մարմնի պետի թեկնածությունները:

Առողջապահության պետական տեսչության ուղղությամբ ՀԲ-ի կողմից հրավիրված միջազգային փորձագետներին ներկայացվել է ՀՀ ԱՆ առողջապահության պետական տեսչությունում առկա խնդիրները և տեսչական մարմնի ձևավորելու հարցը: Միջազգային փորձագետների մասնակցությամբ հարցը քննարկվել է բոլոր շահագրգիռ կողմերի հետ, որից հետո փորձագետները ներկայացրել են միջազգային առաջատար փորձի վրա հիմնված առաջարկություններ՝ ՀՀ ԱՆ առողջապահության տեսչական մարմնի ստեղծման և այլ մարմիններից վերջինիս գործառույթների տարանջատման վերաբերյալ: Ներկայացված առաջարկների հիման վրա աշխատանքներ են տարվում առողջապահության տեսչական մարմին ստեղծելու ուղղությամբ:

ՀՀ ֆինանսների նախարարության երկու տեսչությունների հարցը քննարկվել է միջգերատեսչական հանձնաժողովի նիստում, որից հետո աշխատանքային հանդիպումներ են կազմակերպվել տեսչությունների հետ աշխատանքների հետագա ուղղությունները հստակեցնելու նպատակով: Նշված ուղղությամբ աշխատանքները նախատեսվում է շարունակել միջազգային առաջատար փորձի վերաբերյալ ՀԲ փորձագետներից տեղեկատվությունը ստացումից և ամփոփելուց հետո:

Ռիսկի վրա հիմնված ստուգումների համակարգի լիարժեք ներդրման շրջանակներում աշխատանքներ են տարվել տարբեր տեսչություններում ներդրված ոլորտային մեթոդաբանությունների և ստուգաթերթերի վերանայման ուղղությամբ՝ ըստ անհրաժեշտության վերջիններս համապատասխանեցնելով ոլորտային օրենքների և ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգերի պահանջների: Այս շրջանակներում մշակվել է նաև «Ստուգումների մասին» ՀՀ օրենքի նախագիծը:

«Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի պահանջներին ինչպես նաև ՀՀ կառավարության կողմից ընդունված որոշումներին համապատասխան աշխատանքներ են տարվում տեսչական մարմինների միասնական էլեկտրոնային համակարգի ստեղծման և տեսուչների վերապատրաստման դասընթացների կազմակերպման ուղղություններով:

ՓՄՁ-ին պետական աջակցության 2015 թվականի ծրագրի իրականացում

2015թ. ընթացքում ՓՄՁ պետական աջակցության 2015 թվականի ծրագրի շրջանակներում սկսնակ և գործող շուրջ 6000 ՓՄՁ սուբյեկտներին տրամադրվել է 13194 աջակցություն, որի շուրջ 95%-ը ՀՀ մարզերում, առավելապես հեռավոր և սահմանամերձ համայնքներում: Մասնավորապես.

- 403 սկսնակ գործարարների տրամադրվել է ձեռներեցությանն աջակցություն,
- 407 ՓՄՁ սուբյեկտի տրամադրվել է ուսուցողական աջակցություն,
- 11857 ՓՄՁ սուբյեկտի տրամադրվել է տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն,
- 176 սկսնակ և գործող ՓՄՁ սուբյեկտներին տրամադրվել է վարկային երաշխավորություն,
- 259 ՓՄՁ սուբյեկտի տրամադրվել է աջակցություն ՓՄՁ միջազգայնացման ուղղությամբ, ներառյալ ՁԵՑ գործունեության շրջանակներում,

- 67 ՓՄՁ սուբյեկտի տրամադրվել է ոլորտային բիզնեսներին աջակցություն տեխնոլոգիական խորհրդատվությունների տրամադրման ուղղությամբ,
- 25 ՓՄՁ սուբյեկտի տրամադրվել է դրամաշնորհ՝ ոլորտային աջակցության ծրագրի շրջանակներում:

Տեղական տնտեսական զարգացման ծրագրի շրջանակներում 10 համայնքներում աջակցություն են ստացել 35 ՓՄՁ սուբյեկտներ: Նոր սերնդի ՀԴՄ-ների արժեքի փոխհատուցման ծրագրի շրջանակներում աջակցություն են ստացել 611 ՓՄՁ սուբյեկտներ: Կազմակերպություններին և քաղաքացիներին տրամադրվել է 26 միավոր գյուղտեխնիկա:

«Միջազգային և օտարերկրյա դոնոր կազմակերպությունների հետ ՓՄՁ ոլորտի զարգացման համատեղ ծրագրերի մշակում և իրականացում» ծրագրով նախատեսված ուղղությունների ընդլայնման և լրացուցիչ ֆինանսական ռեսուրսների ներգրավման նպատակով հաշվետու ժամանակահատվածում Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը շարունակել է համատեղ ծրագրեր մշակել և իրականացնել մի շարք միջազգային և օտարերկրյա կազմակերպությունների հետ: Մասնավորապես՝ ԱՄՆ ՄԶԳ ֆինանսավորմամբ իրականացվող «Գործընկերություն՝ հանուն գյուղական համայնքների բարգավաճման» ծրագիր, «Տեղական արտադրանքի զարգացում և տեղական ապրանքանիշերի առաջմղում» ՃՄՀԳ համատեղ ծրագիր, «Ձեռնարկատիրական աշխատանք Հայաստանի երիտասարդության համար» ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպության (UNIDO) համատեղ ծրագիր:

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԻՆՈՎԱՑԻՈՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԻ ԱՄՐԱՊՆԴՈՒՄ

Տնտեսության ինովացիոն զարգացման հայեցակարգային հիմնադրույթների ամրագրում

«Հայաստան. կայուն տնտեսական զարգացման ռազմավարություն. ինովացիոն առաջընթացի ուղին» փաստաթղթի առաջին նախագիծը ներկայացվել է հունիսի 30-ին ՀՀ կառավարության ընդունելությունների տանը կայացած ՀՀ «Տնտեսական օրակարգ» համաժողովում: Փաստաթղթի վերաբերյալ նկատառումներ և առաջարկություններ ստանալու նպատակով այն ներկայացվել է ավելի քան 70 շահառուների (պետական մարմիններ, միջազգային կազմակերպություններ, մասնագիտական շրջանակներ): Փաստաթղթի լրամշակված նախագիծը ներկայացվել է նոյեմբերի 11-ին Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի «Գիտելիք, նորաստեղծություն և զարգացում» 25-րդ գիտաժողովին և նոյեմբերի 13-ին Դիլիջանում տեղի ունեցած Բիզնես ինովացիոն համաժողովին: Փաստաթղթի լրամշակված նախագիծը ներկայացվել է շահագրգիռ նախարարություններին, համապատասխան առաջարկություններ ստանալուց հետո ևս մեկ անգամ լրամշակվել է և ՀՀ էկոնոմիկայի նախարարի 25.12.2015թ. N01/24.2.5/10338-15 գրությամբ սահմանված կարգով ներկայացվել է ՀՀ կառավարության աշխատակազմ:

Ինովացիոն ոլորտում միջազգային համագործակցության ակտիվացմանն աջակցություն

Ապահովվել է ՀՀ ներկայացուցիչների մասնակցությունը Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կազմակերպած աշխատանքային խորհրդակցություններին՝ տեսակոնֆերանսների ձևաչափով: Եվրասիական տնտեսական հանձնաժողով առաջարկություններ և դիտողություններ են ներակայացվել Եվրասիական տեխնոլոգիական պլատֆորմների ձևավորման և գործունեության կարգի նախագծի վերաբերյալ:

Փետրվարի 12-ին ստորագրվել է համագործակցության համաձայնագիր ՀՀ էկոնոմիկայի նախարարության «Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի (ՆՁԱԿ) և

Երևանում Ռուսաստանի գիտության և մշակույթի կենտրոնի միջև: Համագործակցությունը նախատեսվում է իրականացնել ԱՊՀ մասնակից պետությունների մինչև 2020թ. ինովացիոն ոլորտում համագործակցության միջպետական ծրագրի շրջանակներում:

Փետրվարի 12-ին ՆՁԱԿ-ի Տնտեսական հետազոտությունների և վերլուծությունների բաժնի մասնագետները մասնակցել են հայ-ռուսական երիտասարդական առաջին համաժողովին:

Մարտի 23-ին ՆՁԱԿ-ը «Երիտասարդ նորարարների դպրոց» ծրագրի շրջանակում կազմակերպել է «Նորարարությունների առևտրայնացման մեխանիզմները «Սկոլկովո» ինովացիոն կենտրոնի օրինակով» թեմայով սեմինար-քննարկում: Պայմանավորվածություն է ձեռք բերվել «Սկոլկովո» ինովացիոն կենտրոնի հետ ռուս-հայկական համաժողով անցկացնելու մասին, որի շրջանակում կկազմակերպվի ՀՀ ինովացիոն տնտեսության զարգացման գերակա ուղղությունների վերաբերյալ մասնագիտական սեմինարների շարք:

Երկու հայ գյուտարարի աջակցություն է ցուցաբերվել ներկայանալու ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի (UNECE) կողմից կազմակերպված «Ideas for a Change award» նորարարական գաղափարների ցուցահանդես-մրցույթին:

ՀՀ կառավարություն է ներկայացվել Ճապոնիայի կառավարության՝ Զարգացմանն ուղղված պաշտոնա-կան օգնության (ODA) տեխնիկական համագործակցության և դրամաշնորհային ծրագրի շրջանակում մշակված «Տեխնոլոգիական զարգացման և նախատիպային կենտրոնի ստեղծում» հայտի նախագիծը:

Ճապոնիայի կառավարության Զարգացմանն ուղղված պաշտոնական օգնության (ODA) ծրագրերի շրջանակում 2016թ. համար տեխնիկական համագործակցության դրամաշնորհային ծրագիր իրականացնելու հայտ է ներկայացվել՝ ՆՁԱԿ-ում պրոտոտիպային կենտրոնի ստեղծման և տեխնիկական հագեցման համար:

Սեպտեմբերի 24-ին անցկացվել է ՆՁԱԿ-ի, ՌԴ կրթության և գիտության նախարարության, ՌԴ «МИСиС» ազգային գիտահետազոտական տեխնոլոգիական համալսարանի և Երևանում ՌԴ գիտության և մշակույթի կենտրոն կողմից համատեղ կազմակերպված «Նանո-, բիո-, տեղեկատվական, ճանաչողական տեխնոլոգիաներ խորագրով ցուցահանդես-սեմինարը»:

Սեպտեմբերի 25-ից 27-ը ք.Ծաղկաձորում ՆՁԱԿ-ի կողմից կազմակերպվել է «Գիտություն և ինովացիա 2015» միջազգային երիտասարդական գիտաժողովը: Գիտաժողովի աշխատանքների շրջանակում կազմակերպվել են հանդիպումներ ՌԴ պատվիրակության անդամների և մի շարք ՀՀ կազմակեր-պությունների ներկայացուցիչների միջև: Կնքվել են մի շարք համագործակցության պայմանագրեր:

Սեպտեմբերի 27-ից 30-ը երիտասարդական գիտաժողովին հաջորդել է Հայաստանում առաջին «Նորարարությունների կառավարում» միջազգային երիտասարդական գիտական դպրոցը: Միջոցառումներին մասնակցել են գիտնականներ, դասախոսներ և ուսանողներ Հայաստանից, Ռուսաստանից, Բելառուսից, Ղազախստանից, Ղրղզստանից, Ուզբեկստանից և այլ երկրներից:

Առաջարկ է ներկայացվել Հայաստանում Ասիական զարգացման բանկի Մշտական առաքելությանը «Արտահանմանն ուղղված և ինովացիոն արդյունաբերության զարգացման տեխնիկական աջակցության» ծրագրի շրջանակում Հայաստանում ինովացիոն ենթակառույցների կարողությունների հզորացման ուղղությամբ:

ՆՁԱԿ-ի, «Ռոսնանո» կորպորացիայի ենթակառուցվածքների, Կրթական ծրագրերի հիմնադրամի և Հայաստանի Ստանդարտների ազգային ինստիտուտի միջև կնքվել է եռակողմ պայմանագիր

նորարարությունների նորմատիվ ապահովման բնագավառում համագործակցության և նորարարության ոլորտում ստանդարտացման միջպետական համակարգման կենտրոնի ստեղծման վերաբերյալ:

Գյումրու և Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնների գործունեության իրականացման 2015 թվականի ծրագրի իրականացում

ՀՀ կառավարության 2015թ. փետրվարի 12-ի նիստում ընդունվել է «Գյումրու և Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնների գործունեության իրականացման 2015թ. ծրագիրը և միջոցառումների ցանկը հաստատելու մասին» N101-Ա որոշումը:

Գյումրու տեխնոլոգիական կենտրոնում ներկայումս տեղակայված են 23 տեղական և արտասահմանյան կազմակերպություններ: Կենտրոնի կիրառելի տարածքի զբաղվածությունը կազմում է 99%:

2015թ. մայիսի 25-ին Գյումրիում տեղի է ունեցել «Դ-Լինկ Ինտերնեյշնլ ՊՏԵ ԼՏԴ» ընկերության հայաստանյան ներկայացուցչության հետազոտական կենտրոնի նորակառույց շենքի բացման արարողությունը: Նույն օրը Գյումրու տեխնոլոգիական կենտրոնում տեղի է ունեցել ԹՈՒՄՈ ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի մասնաճյուղի բացման արարողությունը:

Գյումրու տեխնոլոգիական կենտրոնում կազմակերպվել են մասնագիտական դասընթացներ ուսանողների և մասնագետների համար: Բիզնես աջակցության և խորհրդատվություն է տրամադրվել ընկերություններին, թիմերին և անհատ ձեռներեցներին:

Գյումրու տեխնոլոգիական կենտրոնում տեղի են ունեցել Գյումրու և Վանաձորի համաֆինանսավորվող դրամաշնորհային մրցույթներ, որոնց արդյունքում հաղթող ճանաչվեցին 12 ծրագրեր Գյումրիից և 3 ծրագրեր Վանաձորից: Մրցույթների արդյունքում հաղթող ճանաչված թիմերի կողմից ընկերություններ են հիմնվել Գյումրիում և Վանաձորում:

Ավարտման փուլում են գտնվում Գյումրու տեխնոլոգիական կենտրոնի բարեկարգմանն ուղղված լրացուցիչ աշխատանքները: Ավարտվել են Գյումրու տեխնոլոգիական կենտրոնի համար կահույքի ձեռքբերման աշխատանքները:

Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնի հիմնանորոգման նպատակով Համաշխարհային բանկի «Էլ.-հասարակության և մրցունակության համար նորարարության ծրագիր» վարկային ծրագրի շրջանակում հայտարարվել է շինարարական կազմակերպության ընտրության մրցույթ, որի արդյունքում հաղթող են ճանաչվել «Ախուրյանի կոոպշին» և «Ագաթ-777» ՍՊԸ-ները: Արդեն իսկ սկսվել են Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնի շինարարական աշխատանքները: Ընտրվել են Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնի բիզնեսի զարգացման խորհրդատուն և դասընթացների համակարգողը:

Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնին հատկացված ժամանակավոր աշխատանքային տարածքում հիմնվել են ՏՀՏ և ճարտարագիտության ոլորտների ուղղվածությամբ ուսումնական լաբորատորիաներ:

Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնում կազմակերպվել են մասնագիտական դասընթացներ աշակերտների, ուսանողների և մասնագետների համար: Բիզնես աջակցություն և խորհրդատվություն է տրամադրվել թիմերին, սկսնակ և գործող ընկերություններին:

Վանաձորի համաֆինանսավորվող դրամաշնորհների ծրագրի շրջանակներում դրամաշնորհ են ստացել 4 ընկերություններ:

Դեկտեմբերի 12-ից 13-ը Վանաձորում տեղի է ունեցել «Հեքըթոն[ՅԱՆ] մանկություն 2015» նորարար գաղափարների և ծրագրավորման մրցույթը, որին մասնակցել են ավելի քան 70 թիմ, որոնցից 18-ը՝ Վանաձորից: